# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 80
*26 ապրիլ 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 50-59 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գուգարք համայնք, հասցե ՝ փող. 6, 47

Հեռախոս՝ 0322-5-24-76
Էլ.Փոստ՝ gugarq.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 28 » Մարտ 2018 թվականի N **50**

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՍՄԻԿ ԱՎԱԼՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հասմիկ Ավալյանի 2018 թվականի մարտի 28-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ.

1. Գուգարք համայնքի Կոտեջային 3 փող, 1 տնակ հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Հասմիկ Ավալյանի հայտը բավարարել և նրան տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2018 թվականի 1-ին կիսամյակի համար:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար          Ա.Աշուղյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

28 01 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 51

06-031-0025-0005, 0047 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Ս. Կարապետյանի դիմումը, գույքային թերթը կազմված 26.02.1995թ., հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումը, «Է. Ապրեսյան» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշմամբ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0025-0005, 0047 ծածկագրերի տակ գտնվող 0.0344հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1987թ. կառուցված 68.89քմ մակերեսով նկուղի, 1987թ. կառուցված 69.83քմ մակերեսով բնակելի տան, 1987թ. կառուցված 10.37քմ մակերեսով բաց պատշգամբի, 1987թ. կառուցված 81.04քմ մակերեսով բնակելի տան, 1987թ. կառուցված 8.36քմ մակերեսով բաց պատշգամբի, 1987թ. կառուցված 6.12քմ մակերեսով աստիճանահարթակի նկատմամբ Սարգիս Ստեփանի Կարապետյանի (ծնվ. 1936թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.0344հա հատկացված հողամասն անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել Սարգիս Ստեփանի Կարապետյանին:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է`

գ. Գուգարք 4-րդ փողոց 1-ին նրբանցք տուն 1/1

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Գուգարքի համայնքապետ` Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

29 03 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 52

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ՔՈԹԵՋԱՅԻՆ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 19 ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴԱՆ ՇԱԼԻԿՈՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԻՐ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 63 հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 714 Ն որոշման «Է» կետով, 26.12.2002թ. ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի դրույթներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387 Ն որոշումով, հիմք ընդունելով ժառանգության իրավունքի 28.07.2011թ. 3300 վկայագիրը՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0012-0063 ծածկագրի 388.3քմ ընդհանուր օգտագործման հողամասը բաժնային սեփականության իրավունքով հատկացնել 4 տնատիրություններին՝ Վարդան Շալիկոյի Մանուկյանի, Սուսաննա Ջոհրանյանի, Վանուշ Մանուչարյանի և Անժիկ Պետրոսյանի ընտանիքներին, որից Վարդան Մանուկյանի բաժնեմասը կազմում է 97.07քմ (համաձայն որակավորված անձի կողմից կազմված հատակագծի):
2. Նշված հողատարածքում կառուցված շինությունները օրենքի ուժով ճանաչել օրինական:
3. Գույքի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝

գ. Գուգարք Քոթեջային 3 փողոց շենք 19 բնակարան 1

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 53

**03.04.2018**

## ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝*

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Մարտիրոսյան Սաթենիկ – 40000դր.
2. Առաքելյան Լիլիթ – 25000դր.
3. Սաքանյան Իգոր – 90000դր.
4. Հովսեփյան Ոսկեհատ – 40000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 54

**03.04. 2018**

## ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 46 հոդվածի 1-ին մասի 5 կետը՝*

Փոխանցել ներքոհիշյալ ուսանողների ուսման վճարները՝

1. Հարությունյան Վահագն-90000դրամ
2. Սարգսյան Դավիթ Աշոտի – 425000դրամ
3. Սաքանյան Արտավազդ Անդրանիկի – 100000դրամ:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 55
**03.04.2018**

## ՀԱՆԳՈՒՑՅԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը`*

1. Հանգուցյալ Խաթուն Գալուստի Քարհանյանի ընտանիքին տալ դրամական օգնություն` 40000 դրամ:
2. Հանգուցյալ Յասաբեկ Վահրամի Հարությունյանի ընտանիքին տալ դրամակամ օգնություն` 70000դրամ:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

03 04 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 56

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0031-0004 ԾԱԾԿԱԳՐԻՑ 411.9քմ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ 381.64քմ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.**

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 8 կետով, 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912 Ն որոշման 1, 2 և 3 կետերով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 731 Ն որոշումով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387 Ն որոշումով՝*

## ՈՐՈՇԵՑԻ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0031-0004 ծածկագրից (համաձայն հատակագծի) 411.9քմ մակերեսով հողատարածքի և նրա վրա կառուցված 381.64քմ մակերեսով հանրակացարանի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը՝

ա) քանի որ նրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
բ) շինությունյունները կառուցված են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով չսահմանված հողամասի վրա, չեն կառուցված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահաջելու իրավունք չեն առաջացնում:

2. Միջնորդել անշարժ գույքի կադաստրի Վանաձորի տարածքային ստորաբաժանման ղեկավարությանը կատարելու համապատասխան գրանցում:
3. Գույքի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝

գ. Գուգարք Շինարարների փողոց տուն 8

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05. 04. 2018 թվական N 56Գհ

### ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ հողային օրենսգրքով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 14/03/1997 թվականի թիվ 51 որոշմամբ, ՀՀ կառավարության 29/12/2005թվականի թիվ 2387-Ն որոշմամբ

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գուգարք համայնքում 06-031-0031-0004 ծածկագրի տակ գտնվող բնակելի շենքը՝ հանրակացարանը գտնվում է Գուգարք համայնքի սեփականության իրավունքով պատկանող գույքերի ցանկում որպես պետական բնակելի ֆոնդ , ճանաչել 381.64 քմ բնակելի նշանակության շենքի՝ հանրակացարանի նկատմամբ Գուգարք համայնքի սեփականության իրավունքը :

2. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցե՝ Գուգարք համայնք, Շինարարների փողոց, 8 հանրակացարան:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Աշուղյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք

# Ո Ր Ո Շ Ու Մ

05. 04. 2018 թվական N 57

## 0.04119 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ հողային օրենսգրքով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 13/10/2005 թվականի թիվ 1916-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29/12/2005թվականի թիվ 2387-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով մարզպետարանի կողմից տրված դրական եզրակացությունը, Մել և Միլ Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից տրված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գուգարք համայնքում 06-031-031-004-02 ծածկագրի տակ գտնվող 0.04119 հա հողամասը ՀՀ կառավարության 13/10/2005 թվականի N1916-Ն որոշմամբ ընդգրկված է Գուգարք համայնքին անհատույց սեփականության իրավունքով տրամադրված հողամասերի ցանկում, գրանցել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը 0.04119 հա հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Հողամասի գործառնական նշանակությունը խառը կառուցապատումից փոփոխել բնակելի կառուցապատման :
4. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ / չի առաջացնում սերվիտուտ:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ու Մ N 58

**06 ապրիլի 2018**

## ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 46 հոդվածի 1-ին մասի 5 կետը՝*

Փոխանցել ներքոհիշյալ ուսանողների ուսման վճարները՝

1. Հակոբյան Իրմա Գարիկի – 200000դր.
2. Պողոսյան Տիգրան Վարդանի – 175000դր.
3. Մադոյան Ագնեսա Արարատի – 126000դր.
4. Հարությունյան Լիլիթ Արսենի – 150000դր.
5. Միկիչյան Վազգեն Վահեի – 125000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 59
**06.04.2018**

ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝*

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Առաքելյան Գարիկ – 70000դր.
2. Հակոբյան Ալվարդ – 35000դր.
3. Սաքանյան Ռայա – 60000դր.
4. Առաքելյան Վարդանուշ – 50000դր.
5. Առաքելյան Սվետլանա – 40000դր.
6. Բաբայան Մանուշ – 70000դր.
7. Գասոյան Մարիամ – 50000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ